2. ԿԵՉՈՒՏ (ՂՈՒՇՉԻ)

Վալոյ ձորի հնագույն գյուղերից է. Ստ. Օրբելյանի ցուցակի մեջ հիշված է 6 չափ հարկով. ըստ այդմ, XIII դարում գավառի ամենափոքր գյուղերից էր։

Գյուղի մեջ պահպանվել են երեք եկեղեցիներ, որոնք իրենց ճարտարապետական ոճով վերաբերում են VII, XIII և XVII դարերին։ Հները կիսավեր են, դրանցից VII դարինը գտնվում է գյուղի արևմտյան եզրին՝ Արփա գետի մերձափնյա բլրակի վրա. բազիլիկ շինք է։ Սրա շուրջը գերեզմանատուն է, որտեղ և կանգնած է եղել հնագույն մի խաչքար՝ 886 թվականի արձանագրությամբ։ Գերեզմանատան բոլոր քարերը որպես շինանյութ, օգտագործվել են հետագայում Արփա գետի վրա շինված կամուրջի համար։ Այժմ էլ կամուրջի մոտ ընկած են մի քանի խաչքարեր և տապանաքարեր, որոնք ավելացել են շինության ընթացքում։

Ուշ շրջանի տապանագրեր ունեցող մի գերեզմանատուն էլ գտնվում է գյուղից արևվերք, ձորի ձախ ափի բարձրության վրա։

***31. ԽԱՉՔԱՐ**, կանգնած է եղել գյուղի արևմուտքում գտնվող VII դարի եկեղեցու մոտ, մեծ և անտաշ պատվանդանի վրա, թիկունքին՝*

Ի թագաւորութեան Վասակա. sr. Հաթգէն որդի Սիւնեաց իշխանին, հայոց թուականութեան որ :ՃԼԵ: (886) էր, ես Դաւիթ կանգնեցի զխաչս վասն հոգւոյ · · · · յաղաւթս յիշեցէք։

Ծանոթ. *Խաչքարն այժմ գոյություն չունի։*

Հրատ. *Լալայան, Աղդ. Հանդ.* XII, 253։

***32. ԽԱՉՔԱՐԻ** բեկոր, ընկած է Արփա գետի կամուրջի մոտ, աջ ափին տակին 1 տող.*

Թվ. :ՉԼԵ: (1286):

·:Թ:·Կ:Հ:Լ:Ե:

Ծանոթ. *Խաչքարի վերին մասը կոտրված-կորած է, թվականը պահպանված է ստորին մասի վրա։*

Լուսանկ. 17:

***33. ՏԱՊԱՆԱՔԱՐ**, գտնվելիս է եղել գյուղի արևմտյան կողմի եկեղեցու մոտ. վրան 3 տող.*

ԱՅՍԷՀԱՆԳԻՍՏ ՊԱՐՈՆԹԱՄՂՈՒԹԻՆՈՐ
ՆԱՀԱՏԱԿԵՑԱՒԻ ՊԱՏԵՐԱԶՄԻՈՐԷՐԶԱՒՐԵՂ
ԵՒ ՏՂԱՑ: ԹՎ:ՀՂԵ::

ԱՅՍ Է ՀԱՆԳԻՍՏ ՊԱՐՈՆ ԹԱՄՂՈՒԹԻՆ, ՈՐ |
ՆԱՀԱՏԱԿԵՑԱՒ Ի ՊԱՏԵՐԱԶՄԻ, ՈՐ ԷՐ ԶԱՒՐԵՂ |
ԵՒ ՏՂԱՑ. Թվ. :ՀՂԵ: (1346):

Ծանոթ. *Այժմ գոյություն չունի, գծագիրն ստացել ենք Հ. Եղիազարյանից։*

34. ԽԱՉՔԱՐԻ ԲԵԿՈՐ, ընկած է Արփա գետի կամուրջի մոտ, աջ ափին, տակին մանրատառ 7 տող.

ՍՈՒՐԲ
. . ՈՐԴ
ԵԱՐ
ԱՐԻՀ
ՈՒՍԷ
Փ ՁԱ
ԴԱՓԻ

ՍՈՒՐԲ . . . . . ՀՈՒՍԷՓ ԾԱՌԱՑ ՔԻ:

Ծանոթ. Արձանագրությունը գնդի ձախ կողմում է, իսկ աջ կողմում քանդակված է արագիլ՝ կոցին ձուկ բռնած, ապա երկու բաղեր։ Բոլոր ֆիգուրներն ուռուցիկ են։

35. ՏԱՊԱՆԱՔԱՐ, օրորոցաձև, գտնվում է գյուղի արևմտյան կողմի գերեզմանատան մեջ, արևմտյան ճակատին՝ 6 տող։

ԵՍԱՄԻՐՍԿ
ԱՆԵՅՅԻՅԻՍՔ
ԽԱՉՍ ՈՐԴՈՅՆ
ԻՄՈՅ
ՍԱՐԳ
ՍԻՆ

ԵՍ ԱՄԻՐՍ Կ|ԱՆԿՆԵՑ|ՈՒ|ՅՑԻ ՍՔ.| ԽԱՉՍ
ՈՐԴՈՑՆ| ԻՄՈՑ| ՍԱՐԳ|ՍԻՆ:

Լուսանկ. 18:

36. ՏԱՊԱՆԱՔԱՐ, օրորոցաձև, վրան քանդակված թռամքած ձի և երկու մարդ. նշված է միայն թվականը։

ԹՎՌՃԺ.

ԹՎ. : ՌՃԺ :)1661):

37. ՏԱՊԱՆԱՔԱՐ, օրորոցաձև, կենցաղային քանդակներով, գտնվում է գյուղի արևելյան կողմի գերեզմանատան մեջ, 2 տող.

ԵՍ . . . . . ԿԱՆԿՆԵՑԻ ՍՔ ԽԱՉՍ
ՈՐԴԻ ՄԻՐՁԱՅՃԱՆԻՆ ԹՎՌԻ

ԵՍ . . . . . ԿԱՆԿՆԵՑԻ ՍՔ. ԽԱՉՍ| ՈՐԴԻ
ՄԻՐՁԱՑՃԱՆԻՆ. ԹՎ. : ՌԻ : (1571):

3. ՋԵՐՄՈՒԿ

Հանքաջրերի այս նշանավոր առողջարանը Ջերմուկ անունով հիշատակված է Ստ. Օրբելյանի ցուցակում և իր հարկի 12 չափով մեծ գյուղերի շարքում է։

Անցյալում տնտեղ կային գյուղատեղի, եկեղեցիների, բերդի և գերեզմանատների ավերակներ, որոնց տեղում այժմ բարձրանում են առողջարանի բազմահարկ շենքերը։ Մեր վերջին այցելության ժամանակ, 1955 թ. նորակառույց շենքի պատի տակ հավաքված և դրված էին մի քանի խաչքարերի բեկորներ, դրանցից մեկը գրեթե քառանկյունի որմնախաչ էր, որի չորս շրջանակներին կար հետևյալ վնասված արձանագրությունը։